

վիճակ. որ եւ արար իսկ : Ձի ըստ խնդրոյ նոցին եւ ըստ վաղընձոյ խոստմանն իւրոյ ետ որդեակն իւր հովութիւն դաւառիս Գողտան : Եւ սա ոչ առնոյր յանձն... իսկ պատրիարզն մեր եւ կաթողիկոսն տէր Մովսէս ոչ հաւանեալ կամացս... : Եւ ի դառնալ սորա առ տէր իւր՝ բռնազրօս զսա ետ նոցա տեսուջս. եւ կրկնակի օրհնութեամբ նամակաւ եւ կոնդակաւ աւանդականաւ առաքեաց ի յայսմ նահանգ : Ընդ որս եւ բիւրապատիկ քան զառաջինն գտեալ ընդունելութիւն. եւ ըստ յառաջնոյն ընդ առաջ եղեն սմա եւ բերեալ յայսմ մենաստան (Ս. Թումայի)... ընդ հովանեաւ սոցա նստաւ յաթոռ արքեպիսկոպոսութեան տէր Խաչատուր հեղինակն ի թվարերութեանս Հայոց ՌՁԱ» (1632) :

Իսկ էջմ. Թ. 179 Աստուածաշունչի յիշատակարանին մէջ կ'արձանագրէ Խաչատուր 1650ին. «...Ես Խաչատուր վարդապետս աշակերտ երանեալ հօրն Մօսիսի կաթողիկոսի Հայոց. որոյ հրամանաւ եւ եղեւ մեզ ժառանգել զաթոռս Գողթան՝ զսուրբ վանս որ յանուն սրբոյ առաքելոյն Թումայի հաստատեալ է» :

Վեցերորդ՝ ծերունի մաքուր աղանին, կուսութեամբ պերճացեալն եւ հոգևով բարգաւաճեալն Յակոբ վարդապետն Աստապատեցի. որ եւ սա այս սրբանուէր եղբայրս մեր զվանքն Աստապատու, որ ի վերայ Երասխայ